

01.03.2017թ.

ժ.11: 30

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Սաֆյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժին), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ), Լ.Մարկոսյան (տնային տնտեսությունների հեղափոխությունների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում հինգ հարց.

1. «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների անվանագերծված տվյալների բազաները ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2016 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը»՝ համաձայն հավելվածի:

/Անհաստատելու/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2015 թվականին

իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2016 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2016 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ներկայացված ծրագրերի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ